առողջությունը մարդու իրավունք է

առողջությունն իրավունք է, եւ ոչ՝ արտոնություն

առողջության մասին խոսելիս՝ մենք հանդիպում ենք տարբեր մեկնաբանությունների, որոնք հիմնականում նկարագրում են առողջությունը հիվանդության բացակայությամբ ու չեն դիտարկում առողջությունը՝ որպես մարդու իրավունք:

առողջությունը մարդու իրավունք է եւ սա չի նշանակում, որ բոլոր մարդիկ միշտ առողջ պիտի լինեն: սա նշանակում է հարցնել՝ **արդյո՞ք բոլոր մարդիկ ունեն հավասար պայմաններ առողջ ապրելու համար**, այդ թվում՝

- ☐ **ապրել առողջ միջավայրում**

օրինակ՝ երբ ապրում ենք շրջակա աղտոտվածությունից հեռու՝ մաքուր օդով ու կանաչ տարածքներով լի համայնքում, որտեղ երեխաները կարող են անվտանգ խաղալ բակում, իսկ հարեւանությամբ գործարան չի աշխատում՝ թունավոր նյութերով:

- ☐ **աշխատել առողջ միջավայրում**

օրինակ՝ երբ աշխատում ենք այնպիսի պայմաններում, որտեղ մեր բարօրությունն աջակցվում է. կա պատշաճ օդափոխություն ու ջեռուցում, չկա ճնշում կամ խտրականություն, գործատուն հարգում է մեր հանգստի, առողջության եւ արժանապատվության իրավունքը:

- ☐ **ստանալ ժամանակին հասնող, որակյալ, հասանելի ու մատչելի առողջապահական ծառայություններ**

օրինակ՝ երբ շտապ օգնությունը ժամանում է ժամանակին, երբ պոլիկլինիկայում ստացած ծառայությունից հետո կարիք չկա նույն զննությունը կրկնել մասնավոր կլինիկայում, կամ երբ բուժօգնություն ստանալու համար ստիպված չենք լինում գյուղից քաղաք մեկնել:

- ☐ **ունենալ մաքուր խմելու ջուր ու առողջ սնունդ**

օրինակ՝ երբ ստիպված չենք օրական մի քանի կիլոմետր քայլել ջուր բերելու համար, կամ գիշերը ջուր չունենալու պատճառով սահմանափակել օգտագործումը: երբ ջուրը մաքուր է, առանց քլորի ուժեղ հոտի կամ տարբերվող գույնի: երբ սնունդը՝ հատկապես հանրային հաստատություններում (օրինակ՝ դպրոց, մանկապարտեզ, այլ) սննդարար ու բազմազան է:

- ☐ **ունենալ ապահով եւ արժանապատիվ ապրելու պայմաններ**

օրինակ՝ երբ տունը լուսավոր է, կան կենցաղային անհրաժեշտ պայմաններ, տարածք՝ անձնական կյանքի ու հիգիենայի համար, տունը ջեռուցվում է, մաքուր է:

- ☐ **ստանալ հոգեկան առողջության աջակցություն ու համայնքահենք ծառայություններ**

օրինակ՝ երբ կարող ենք դիմել հոգեկան առողջության աջակցող ծառայության մեր համայնքում՝ առանց խարանի, վախերի կամ խտրականության, եւ ստանալ անհատական աջակցություն՝ առանց հոգեբուժական հիվանդանոցում մեկուսացման վտանգի:

- ☐ **պաշտպանված լինել խտրականությունից**

օրինակ՝ երբ բժիշկը, չունենալով նախնական գիտելիք, չի վախենում մեր ՄԻԱՎ-ով ապրելու հանգամանքից: երբ մեզ չեն մերժում տրամադրել աջակցություն՝ մեր արտաքինի, մեր տան վատ պայմանների կամ հագուստի հիման վրա: երբ գինեկոլոգին պատմում ենք մեր կյանքի պատմությունը՝ առանց մեր գենդերային ինքնության նկատմամբ բացասական արձագանքի:

- ☐ **ունենալ կրթության, խնամքի ու ինքնադրսեւորման հնարավորություններ**

օրինակ՝ երբ չենք զրկվում ֆիզկուլտուրայի կամ սպորտային խմբակի մասնակցելու հնարավորությունից միայն այն պատճառով, որ աղջիկ ենք: երբ յուրաքանչյուրս կարող ենք ազատ արտահայտվել, սովորել, զարգանալ եւ երազել՝ առանց խոչընդոտող կարծրատիպերի:

՞Ինչ կարող ենք անել՝ առողջության իրավունքը կենսագործելու համար

- ☐ **ուսումնասիրենք մեր համայնքը**
  - ՞Ով է օգտվում ծառայություններից
  - ՞Ով է դուրս մնում
  - ՞Ինչ ձայներ չեն լսվում

- ☐ **կիսվենք մեր պատմություններով**
  - պատմենք մեր փորձառությունների մասին
  - խոսենք խախտումների մասին ու փորձենք ձեւավորել հանրային պահանջ

- ☐ **պահանջենք՝**
  - մարդակենտրոն, համայնքահենք ծառայություններ
  - ոչ խտրական, գենդերազգայուն մոտեցումներ
  - համալիր սոցիալ-առողջապահական ծառայություններ:

մի պահ մտածենք...

- կարո՞ղ ենք լինել առողջ, երբ ապրում ենք խոնավ, առանց ջեռուցման տանը,
- կարո՞ղ ենք հանգստանալ, երբ մեր համայնքում չկա նույնիսկ փոքրիկ այգի,
- կարո՞ղ ենք ինքնախնամքի մասին մտածել ու իրագործել մի վայրում, որտեղ ամեն օր առկա է խտրականություն ու վախ
- ...

ապրել մաքուր միջավայրում, ազատ որոշումներ կայացնել մեր մարմնի մասին, ունենալ մաքուր ջուր ու սնունդ, հասանելիություն ծառայություններին, հոգալ մեր մարմնի ու մտքի մասին... սա պետք է լինի ոչ թե երազանք կամ արտոնություն, այլ իրականություն ամեն մեկիս համար, որովհետեւ առողջ լինելը նշանակում է՝ կարողանալ երազել, ստեղծել, սիրել ու ապրել

«Առողջության իրավունք. բովանդակություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի՝ ԵՄ ֆինանսավորմամբ ընթացող «Դիմակայուն քաղաքացիական հասարակություն Արեւելյան գործընկերության տարածաշրջանում» ծրագրի շրջանակում: Ծրագրի ենթադրամաշնորհները համաֆինանսավորվում են Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Փոփոխություն թիմը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի ֆինանսավորող կողմերի տեսակետները: